

# ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՐԻՆԵ ՈԱՖԱՅԵԼՅԱՆ

Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանի վարիչ

### ՎԻԼՅԱՄ ՍԱՐԴՅԱՆԸ ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ<sup>1\*</sup>

**Բանալի բառեր** - Դեմիրճյան, Սարոյան, հակասականություն, գրականություն, քաղաքականություն, խաղաղություն, պատերազմ, անտիպ, բնագիր, արխիվ:

#### Առաջաբան

Դերենիկ Դեմիրճյանը գեղարվեստական երկնումներին զուգահեռ մշտապես զբաղված է եղել իր ժամանակի և անցյալի գրականության, մշակույթի ուսումնասիրության, արժևորման կարևորագույն խնդրով, ինչպես և հայրենիքում ու սփյուռքում ապրող իր հայրենակիցներին վերաբերող հարցերով: Առանձնահատուկ գործվանքով է արձագանքել սփյուռքահայերի, մասնավորապես՝ գրական-մշակութային գործիչների կապվածությանը Հայաստանի հետ: «Նրանք հայրենիք են վերադառնում հողվածում» Դեմիրճյանը գրում է. «Այո՛, սրի ու սարսափի զարհուրանքը միայն անշատեց հայությանը իր Հայրենիքից: Հայկական բանաստեղծությունը հատուկ երգերի հատորներ ունի՝ «ղարիպի երգեր», որոնք սրտակսկիծ ողբեր են հայրենագուրկ հայության, որոնց հայրենապաշտ սիրտը իզուր տենչացել է մեղմել իր հայրենաբաղձության ցավը: Ինչ օտար երկրների շահախնդրության խոսք կարող էր լինել այն հայության մասին, որ երեք հազար տարի արյուն թափեց Հայրենիքը պաշտպանելու և այնտեղ մնալու համար... Եվ մնաց էլ... Հայրենագուրկ հայությունը Հայրենիք է վերադառնում: Դա ամենաբնական գործն է: Ի՞նչ ունի հայությունը օտար երկրների տակ, հազար ու մի պատրանքների ենթակա: Նա պիտի ապրի իր հայրենիքում. ջանա, ստեղծագործի իր սեփական տանը: Այստեղ միայն իմաստ ունի նրա կյանքը»<sup>2</sup>: Հայության

<sup>1\*</sup> Ընդունվել է տպագրության 06.05. 2022 թ.

<sup>2</sup> Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու 14 հատորով, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987թ., հ.14, էջ 490-491:

երկփեղկված երկու հատվածների միջև շփումները, սփյուռքահայերի ձեռքբերումները մեծապես ոգևորել են Դեմիրճյանին: Առավել մեծ է եղել այդ ոգևորությունն այն դեպքերում, երբ հաջողվել է ոչ միայն հեռակա տեղեկությունների, տարածության մեջ չորոշակիացող հարաբերությունների մակարդակում, այլև կենդանի շփումների, անձնական ծանոթությունների հարթության վրա կառուցել հարաբերություններ սփյուռքահայ գործիչների հետ: Լինելով գգուշավոր և շրջահայաց մարդ և այդ հատկանիշներով առաջնորդվելով խորհրդային հայրենիքում ունեցած միջանձնային հարաբերություններում Դեմիրճյանն անսպասելի համարձակ ու բաց է եղել սփյուռքահայերի հետ շփումներում: Լավագույն օրինակը, այս իմաստով, Դեմիրճյանի՝ բոլորովին վերջերս գաղտնագերծված մտերմությունն է բեյրութահայ հասարական-քաղաքական գործիչ, գրող, հրատարակիչ Սիմոն Սիմոնյանի<sup>1</sup> հետ: Վերջինիս այնքան է վստահել Դեմիրճյանը, որ ցույց է տվել իր «Դատողություններ Ղարաբաղի և Նախիջևանի հարցի շուրջ» աշխատությունը, այն աշխատությունը, որի մասին մենք Հայաստանում լայնորեն իրազեկվեցինք միայն գրողի մահվանից 135 տարի անց՝ 2012 թվականին: Սիմոն Սիմոնյանը ի սկզբանե եղել է խորհրդայնամետ-հայրենասեր, որովհետև համարում էր, որ իր հայրենիքը խորհրդային Հայաստանն է: Հետագայում, լինելով Հայաստանում, մեծ հիասթափություն է ապրել և դարձել հակախորհրդային հայացքների կրող: Այս հիասթափության հուլովայթում որոշակի դերակատարություն է ունեցել նաև Դերենիկ Դեմիրճյանը: Սիմոն Սիմոնյանի հետ անսպասելի անկեղծ զրույց է ունեցել դասականը՝ ոչ միայն նրան վստահելով խորհրդային գրաքննությունից թաքուն պահած «Դատողություններ Ղարաբաղի և Նախիջևանի հարցի շուրջ» խոհագրության մասին տեղեկությունը, այլև խոստովանել, որ ինքն ունի տազնապներ՝ կապված հայ ժողովրդի ապագայի հետ, և որ այդ հոգեմկճակն իրեն խանգարում է ստեղծագործել:

1 Սիմոն Սիմոնյան /1914-1986/, գրող, հրատարակիչ, մանկավարժ, սկսած 1939 թվականից Հայեպոմ հրատարակել է հայոց պատմության դասագրքերի շարքը՝ նախատեսված հայկական դպրոցների 1-6-րդ դասարանների համար: 1940-ականների սկզբին, դարձյալ Հայեպոմ, հրատարակել է նաև մայրենի լեզվի «Արագած» դասագրքերի շարքը՝ դարձյալ նախատեսված 1-6-րդ դասարանների համար: Իբրև համահեղինակ՝ հրատարակել է նաև քերականության երկու գիրք, աշարհագրության չորս դասագիրք: 1946-ին հաստատվել է Լիբանանում, զբաղվել ուսուցչությամբ: 1955-ին հիմնել է իր սեփական «Սևան» հրատարակչատունը, որը ընդհանուր հաշվով 55 դասագիրք է հրատարակել սփյուռքահայ աշակերտների համար՝ տարբեր առարկաների գծով: 1958-74 թթ. հրատարակել է «Սփյուռք» շաբաթաթերթը: Հեղինակ է գեղարվեստական մի շարք գրքերի՝ «Կը խնդրուի խաչածել», «Լեռնականներու վերջալոյս», «Սիփանա քաջեր», «Լեռ և ճակատագիր», «Անժամանկորոս»:

Տարիներ առաջ, հանդիպելով Սիմոն Սիմոնյանի որդուն՝ Սասուն Սիմոնյանին, խնդրեցիք մանրամասներ պատմել Դեմիրճյանի և իր հոր հարաբերությունների մասին, հատկապես պարզաբանումներ տալ «Դատողություններ Ղարաբաղի և Նախիջևանի հարցի շուրջ» խոհագրության առնչությամբ: Նա ասաց. «Ես չգիտեմ, թե ինչպես է ստացվել, որ Դերենիկ Դեմիրճյանը խոսել է հորս հետ այդ նյութի մասին, բայց «Սփյուռք» պարբերականում հորս տպագրած հոդվածներն այդ մասին բավական հետաքրքիր տեղեկություններ են պարունակում: Դեմիրճյանի և այլոց գրած ու մեր՝ հայերիս կողմից մոռացված կամ անհայտ մնացած հուշագրերի թեմային անդրադառնալով՝ «Սփյուռք» շաբաթաթերթը հայ ժողովրդին հուզող այլ նյութերի կողքին, փորձել է նաև վառ պահել ներքին հողերի (Ղարաբաղ, Նախիջևան, Ախալքալաք) հայկական պատկանելության իրողությունը, որը սառը պատերազմի պատճառով՝ 50-60-ական թվականներին, հայերս մոռացել էինք ու սկսել ապրել մեզ պառակտող ու տկարացնող ցավալի ժամանակաշրջանի մեջ: Ինչ վերաբերում է Դեմիրճյանի՝ հորս առաջ անկեղծանալուն, դա, թերևս պայմանավորված է եղել ներքին վստահությամբ: Ըստ երևույթին՝ հորս վստահում էին մարդիկ, որովհետև կան հուշագիրներ, որոնք հավաստիացնում են, որ 1954-ին Սիմոն Սիմոնյանն իր հետ սփյուռք է տարել գաղտնի տեղեկություններ պարունակող թղթապանակ»<sup>1</sup>: Այս թեմայի առնչությամբ հետքերի պարզաբանումի ենք հանդիպում բանասիրական գիտությունների թեկնածու Թեհմինա Մարությանի «Արցախյան հիմնական հարցը Սիմոն Սիմոնյանի խմբագրած «Սփյուռք» շաբաթաթերթի էջերում» ուղումասիրության մեջ, որում մասնավորապես կարդում ենք. «Ղարաբաղի հիմնախնդրով մտահոգ անձանց մեջ Սիմոնյանը տալիս է նաև Դերենիկ Դեմիրճյանի անունը: Բարեպատեհորեն հակված ենք ենթադրելու, որ ինչպես հրապարակումներից մեկում է ակնարկում, Ղարաբաղի հարցը «Սփյուռք»-ում բարձրացնելու հորդորն ու խորհուրդը հենց Դեմիրճյանից է տրվել Սիմոն Սիմոնյանին: Ավելին, պարզ է դառնում, որ 1950-ականներին արդեն Սիմոնյանը ծանոթ էր Դեմիրճյանի արխիվում 2014թ.-ին / հայտնաբերվել է 2012-ին, հրապարակվել 2014-ին - Կ.Ռ./ Կարինե Ռաֆայելյանի կողմից հայտնաբերված բացառիկ նյութին՝ «Դատողություններ Ղարաբաղի և Նախիջևանի մասին» խորագրով, որը գրողը հեղինակել էր 1950-ականներին, սակայն հասկանալի պատճառներով չէր հրատարակել: Փաստորեն, Ղարաբաղի հարցը սովետական վարչակարգում ապրող մեր բոլոր մեծերի համար էլ ցավ էր: Ժամանակներն այնպիսին

1 Նյութի աղբյուր՝ <http://www.irates.am/hy/1564091505?fbclid=IwAR1zu2pdmWQWUcBuQD2zcK59kmrIKyOABwOWHoKJbv9QcR0xXu9J6gumunQ#.XTtoP7eaAEA.facebook>

Էին, որ այդ մասին չէին կարող մտածել, ուր մնաց գրավոր կամ բանավոր հրապարակումներով հանդես գալիս: Սիմոնյանի այս վկայությունը ևս մեկ անգամ հաստատում է, որ Նույնիսկ այդ թվականներին Դեմիրճյանը մտահոգ է եղել Արցախի խնդրով և Նույնիսկ հորդորել ժողովրդին նվիրված ազատական «Սփիւռք»-ին՝ իր էջերը ծառայեցնելու ազգանվեր այդ գործին»<sup>1</sup>: Նշենք, որ Սիմոն Սիմոնյանը Դեմիրճյանի խոհագրության մասին խոսել է միայն Նրա մահից հետո /անշուշտ, առաջնորդվելով գրողի անվտանգության նկատառումներով/ 1959-ին, «Սփյուռք» շաբաթաթերթի՝ հոկտեմբերի 3-ին, 10-ին, 17-ին /թիվ 34, 35, 36/ լույս տեսած համարներում հրապարակած իր հոդվածաշարում «Հայկական հողերու հարցը» վերնագրով: Նույն այդ համարներում լույս են տեսել հատված Դեմիրճյանի անավարտ «Մեսրոպ Մաշտոց» վեպից և Սիմոն Սիմոնյանի «Մենք սրբացուցինք Դերենիկ Դեմիրճեանը» հոդվածը, որում նա արժևորում է Դեմիրճյանի հայրենանվեր գործունեությունն ու գրականությունը և դատապարտում Նրան ոչ ճիշտ գնահատող անձանց, ի մասնավորի՝ Գեղամ Սևանին<sup>2</sup>: Բանն այն է, որ Գեղամ Սևանը դատապարտել էր իր հոդվածում Սիմոն Սիմոնյանին՝ Դեմիրճյանի՝ ղարաբայան, Նախիջևանյան թնջուկին վերաբերող դատողությունների գոյության մասին բարձրաձայնելու համար՝ դա համարելով հակախորհրդային քարոզչության արտահայտություն: Նաև անհամաձայնություն էր հայտնել «Մեսրոպ Մաշտոց» վեպի անավարտ մնալու՝ Սիմոնյանի տեսակետի առնչությամբ: Սիմոն Սիմոնյանը կարիծիք էր հայտնել, թե խորհրդային վարչակարգի բռնած դիրքը, հայկական հարցի լուծման համար ոչ բարենպաստ պայմանների առկայությունը խորհրդային Միությունում Դեմիրճյանին մղել են դեպի հոռետեսությունն ու անհուսությունը, և դասականը իր այդ տրամադրությունների բերումով չի կարողացել արդյունավետ աշխատել կյանքի վերջին շրջանում գրել սկսած «Մեսրոպ Մաշտոց» վեպի վրա՝ թողնելով այն անավարտ: Իսկ Գ. Սևանը այդ կարծիքը համարել է սխալ, Դեմիրճյանին վարկաբեկող աններելի քայլ և փորձել հաստատել տարածված այն տեսակետը, թե վեպն անավարտ է մնացել միմիայն գրողի հիվանդ լինելու և մահվան պատճառով, և որ Դեմիրճյանը չի ունեցել որևէ մտահոգության, ընկճախտի պատճառ՝ կապված խորհրդային իրականության հետ: Ցավոք, մեր պահոցներում չհաջողվեց գտնել Գ. Սևանի հոդվածի օրինակը, բայց Սիմոն Սիմոնյանի պատասխան հրապարակումից պարզ է դառնում շատ բան: Այսպես, ի պատասխան Գ. Սևանի հոդվածի՝ Սիմոն Սիմոնյանը գրում է «Մենք սրբացուցինք Դերե-

1 Արցախի պետական համալսարան, Գիտական ընթերցումներ, 2018:

2 Գեղամ Սևան /1926-1991/, արձագիր, գրականագետ:

նիկ Դեմիրճեանը» հոդվածը, որում կարդում ենք հետեւեալը. «Արդարեւ Լիբանանի համայնավարներու «ԻԼ ԷԼ-Էմամ» թերթի հայատառ բաժնին մէջ, որուն նշանաբանն է միշտ ՅԱՌԱՋ... դեպի Բերիայի օրերը՝ հակա-խրուչովեան<sup>1</sup> բովանդակութեամբ, գրող Պրն. Գեղամ Սևան ստորագրեց գրութիւն մը, կրկնակ վերնագիրներով. «Ահամեստութեան և մտաւորական անպարկեշտութեան մասին».- «Դերենիկ Դեմիրճեանի յիշատակին դէմ կատարուած անօրինակ սրբապղծութեան մը առիթով»<sup>2</sup>: Սիմոնյանը ավագ գրչընկերոջ և Դեմիրճեանի հայրենասիրական մտահոգությունների վերաբերյալ իրագել մարդու դիրքերից ուսանելի խրատ է կարդում Գեղամ Սևանի գլխին՝ մասնավորապէս գրելով. «Սիրելի՛ Գեղամ, այսպէս ըլլալու չէր: Եղա՛վ: Վաղը կ' անցնինք ես ու դուն .... կ' անցնին մեր ընկերները, իրենց անդամաքարտերով կամ առանց անդամաքարտերու, կ' անցնին մեր բարեկամութիւններն ու հակառակութիւնները, եւ ամեն ինչ փոշի կը դառնայ: Կը մնայ միայն մեր պատմութիւնը, Հայաստանի ժողովուրդին պատմութիւնը, խորունկ, մութ, տաժանելի, բայց հերոսական, որ ադամամուկը ճեղքող ճառագայթներուն պէս հետզհետէ պիտի լուսավորէ մեր հորիզոնը: Պիտի գայ հաշուետուութեան ժամը, անելի ծանր քան դատաստանի օրը, մեր ոգիները պիտի կանչուին հաշիւ տալու մեր ապրած օրերու գործերուն համար՝ իբրեւ «հոգու մարդեր»: Հաշիւ պիտի տանք մեր լուծութիւններուն, արցունքներուն, քաղաքացիական պարտաւորութիւններուն համար: Վա՛յ թերացողներուն: Ես սոսկումով կը տեսնեմ բանտորական երկաթէ թաթեր՝ արտասահմանի «հոգու մարդոց» կոկորդներուն խրած... Ես լսեցի խղճմտանքիս ձայնին: Չէի կրնար չլսել .... Ես հայ ժողովուրդի իրաւունքի պատուանդանին վրայ կանգնած եմ: ...Ես Դերենիկ Դեմիրճեանը դրի մեր մեծ մեռելներուն համաստեղութեան մէջ: Ես սրբացուցի Դեմիրճեանը: Ոգիները մեզ դատեն: Ես չեմ հաւատար ողջերու դատաստանին»<sup>3</sup>:

Այս ընդարձակ առաջաբանը գրելով՝ նպատակ ունենք ցույց տալու, որ Դերենիկ Դեմիրճեանի հարաբերությունները սփյուռքահայ միջավայրի հետ հարթ չէին, նրա հանդեպ կար հակասական վերաբերմունք սփյուռքում ապրող իր որոշ գրչակից հայրենակիցների կողմից: Ամենախոսուն փաստը, թերևս, «Վարդանանք» պատմավեպի դէմ կազմակերպված

1 Նիկիտա Խրուչչով /1894-1971/, խորհրդային պետական գործիչ, ԽՄԿԿ առաջին քարտուղար, որը Ստալինի մահից հետո դատապարտեց ստալինյան բռնությունները և անձի պաշտամունքը ԽՍՀՄ-ում և մարդկանց տվեց որոշակի ազատություններ:

2 Նյուլթի աղբյուր՝ [http://tert.nla.am/archive/NLA%20TERT/Spyurk/1959/1959\(36\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20TERT/Spyurk/1959/1959(36).pdf)

3 Նույն տեղում:

հրապարակային դատավարությունն է այս առումով: Թեև կային և կան սփյուռքահայ մտավորականներ և պարզապես ընթերցողներ, որոնք մինչ օրս հիանում ու հպարտանում են այդ գրական գլուխ գործոցի գոյությամբ, բայց 1946 թվականի Նոյեմբերի 23-ին Փարիզում կայացել է «Վասակ Սյունին դավաճա՞ն էր» թեմայով հրապարակային գրական դատավարություն<sup>1</sup>: Դեմիրճյանին ամբաստանողները եղել են Արշակ Զօպանեանը<sup>2</sup> և Հայկ Պերպերեանը<sup>3</sup>, որոնք չեն կիսել գրողի վերաբերմունքը Վասակ Սյունու նկատմամբ: Ասել է թե՛ Դերենիկ Դեմիրճյանի գլուխ գործոց վեպը ևս արժանացել է խիստ հակասական վերաբերմունքի:

Ինչևէ, վերադառնանք մեր նյութին. փաստորեն, ինքը՝ Դեմիրճյանն էլ չկարողացավ խուսափել հակասականությունից և հրապարակայնորեն հանդես եկավ Վիլյամ Սարոյանի մասին երկու հոդվածով, որոնք արմատապես ժխտում են մեկմեկու:

### **Դեմիրճյանը Սարոյանի մասին. իրարամերժ կարծիքներ**

Բնական է, որ Դեմիրճյանի հետաքրքրության ծիրում իր կարևոր տեղը պիտի զբաղեցնեն մեր աշխարհահռչակ հայրենակից Վիլյամ Սարոյանը:

Դեմիրճյանը հրապարակավ իր վերաբերմունքն է արտահայտել Սարոյանի գրական և քաղաքական-քաղաքացիական նկարագրի վերաբերյալ երկու անգամ: Եվ Դեմիրճյանի գնահատականների մեջ՝ ուղղված Սարոյանին, առկա է հակասականություն: Միևնույն երկը վերլուծելիս դասականը ի հայտ է բերում միանգամայն տարբեր մոտեցում և վերաբերմունք: Դեմիրճյանի հայացքը Սարոյանի դեպքում երկփեղկված է: Բայց փորձենք հասկանալ կամ կռահել այդ իրողության պատճառները: Այսպես. 1943թ. լույս է տեսնում Վիլյամ Սարոյանի «Տասը Նոր պատմուհիներ» ժողովածուն արևմտահայերեն՝ Սահակ Պալլոզեանի թարգմանությամբ (Վիլյամ Սարոյան, Տասը Նոր պատմուհիներ, թարգմ.՝ Սահակ Պալլոզեան, Կահիրե, 1947թ.): Գիրքն արժանանում է Դեմիրճյանի արձագանքին՝ Թեհրանում լույս տեսնող «Վերածնունդ» քաղաքական, հասարակական-գրական օրաթերթում (1946թ., թիվ 26, 27, 28):

«Սարոյանն այն ստեղծագործողներից է, - գրում է Դեմիրճյանը, - որոնք

1 Դատավարության ազդագիրը պահպանվում է Գրականության և արվեստի թանգարանի Դեմիրճյանի ֆոնդում /ԳԱԹ ԴՖ 360/, կրկօրինակը՝ Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանում:

2 Արշակ Զօպանեան /1872-1954/ հայ գրող, հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ:

3 Հայկ Պերպերեան /1887-1978/, արևելագետ, հայագետ:

շատ քաջավարժ հեծյալների կարող են ձիուց վար բերել: Սարոյանը ինքնատիպ գրող է՝ ոչ սովորական մտքով, խորհող մարդ՝ ոչ հայտնի ըմբռնմամբ: Նրա «Նորման» պետք է որոշել հենց իր՝ Սարոյանի մեջ և Սարոյանով որոշել Նրա «մեթոդը»: Միավաճ չեմ լինի, եթե ասեմ, որ Սարոյանն ավելի շատ ջանք է թափել ինչպես չգրելու մտահոգության վրա, քան գրելու այն բազմահազար կանոններով, որով բարձրացել է համաշխարհային գրականություն: Եվ ողջ խնդիրն այստեղ այն է, որ Սարոյանն ամենից շատ ատելով ինքնատիպ երևալու փորձերը՝ ինքնատիպ է, խորհող է և գրավիչ՝ բնականորեն և անխուսափելիորեն: Սարոյանն անփույթ է իր գրողական հանգամանքին, գրական արվեստին, համեստ է իր գրողի հռչակի ու փառքի պահանջների մեջ»<sup>1</sup>:

Դեմիրճյանին տասնամյակներ անց պիտի լրացներ բանաստեղծ Վահագն Դավթյանը: Նշենք, որ Սարոյանը Հայաստան է այցելել չորս անգամ 1935, 1960, 1976, 1978 թվականներին: Վերջին երկու այցերի ժամանակ Նրա մշտական ուղեկիցն է եղել Վահագն Դավթյանը, նրանք շփվել են մտերիմների նման, և այդ օրերի տպավորությամբ Վահագն Դավթյանը հետագայում Սարոյանի մասին գրել և հրատարակել է «Բարի հսկան» գիրքը: Գրքում հեղինակն ասում է, որ Սարոյանը խորը մտքի, վերլուծական մեծ կարողությունների տեր, շատ զարգացած մարդ էր և հավելում հետևյալ տողերը. «Բայց այդ ամենը զարմանալիորեն «չի երևում» Նրա ստեղծագործությունների մեջ: Ստեղծագործելիս Նա կարծես «մոռանում է» այդ ամենը և կրկին նմանվում մեր ժողովրդական այն թափառիկ գուսաններին ու բանասացներին, որոնք միայն բնական մղումով ու ձիթքով սքանչելի ասքեր ու վիպերգություններ են հյուսել: Այդ, այսպես ասած, «մոռացումը» մեծերի մենաշնորհն է, փոքրերն են, որ ընթերցողին զարմացնելու հավակնությամբ, իրենց բոլոր գաղտնիքներն ու իմացությունները ցուցադրականորեն սփռում են իրենց ստեղծագործությունների մակերեսին, մինչդեռ մեծերը այդ ամենը այնպես են տարրալուծում գեղարվեստական պատկերների ու կերպարների, խորքի ու էության մեջ, որ դառնում է «աննկատելի...»<sup>2</sup>:

Սարոյանի՝ իբրև գրողի անհատական-ստեղծագործական որակներին անդրադարձնելով չի սահմանափակվում Դեմիրճյանը, Նա Նաև հետամուտ է պարզելու և հանրությանն ի ցույց դնելու այն միջավայրը, այն հենքը, որից ծնունդ է առնում այդ գրողի ներշնչանքը. «Սարոյանն

1 «Վերածնունդ» քաղաքական, հասարակական-գրական օրաթերթ, Թեհրան, 1946թ., թիվ 26:

2 Վահագն Դավթյան, Բարի հսկան /հանդիպումներ Վիլյամ Սարոյանի հետ/, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1979թ., էջ 169: /Հետագայում Վահագն Դավթյանի՝ Սարոյանին վերաբերող մեջբերումները կլինեն այստեղից/:

անմիջապա գրող չէ և ենթակա է կյանքի որոշ դպրոցի ազդեցության, ինչպես և իր ընտանեկան կյանքի կնիքը շատ գորեղ է նրա հոգու վրա: Եվ անհայրենիք չէ, որքան որ թվում է իրեն: Հին Հայրենիքի ուրվականները հետևում են նրան իր Նոր Հայրենիքում և այնպիսի խորագրաց հոգու համար, ինչպես Սարոյանն է՝ այդ ուրվականները դեռ շատ ժամանակ, թերևս, մինչև վերջ պիտի հետևեն նրան: Ոչ նրա հրաժարումը իր հին Հայրենիքից և ոչ այդ Հայրենիքի ժխտումը նրան՝ չունի ոչ մի նշանակություն: Սարոյանին խոսեցնողը իր հին Հայրենիքն է և նրա ժողովուրդը, որ հազար ու մի անտեսանելի թելերով կապված են նրա հոգու հետ»<sup>1</sup>:

Դեմիրճյանի նպատակը սոսկ իր նշանավոր հայրենակցի գրականության արժևորումը չէ, թեև դա է նրա մասին գրելու շարժառիթը: Դասականը հնարավոր ամեն մի մանրուք օգտագործում է՝ ընդգծելու համար, որ Սարոյանը հայ գրող է, որ նրա գրականությունն ունի ազգային արմատ ու նախասկիզբ. «Սարոյանը ազգային գրող չէ իր ծագման պատճառով, բայց և կոսմոպոլիտ չէ՝ գրելով այն լեզվով, որի միջապայով ընկել է պատահմունքի բերմունքով: Սարոյանը համամարդկային երազների գրող է: Բայց արմատ ունի: Այդ արմատը ժողովուրդն է: Նա զգում է այդ ժողովուրդը»<sup>2</sup>:

Դեմիրճյանը չի սահմանափակվում մասնավոր դիտարկումների շրջանակներում, նա գնում է դեպի ընդհանրացում և ջանում հիմնավորել իր հնչեցրած գնահատականը հայ գրականության, հայ գրողին վիճակված պատմական ճակատագրի խորապատկերին: «Չենք սիրում գուշակել ապագան, մանավանդ... անցյալը,- կարողում ենք հողվածում:- Բայց մի մտքի խաղ թույլ ենք տալիս մեզ: Եթե Սարոյանը ծնվեր իր բուն Հայրենիքում, նրա մեջ կրկին կծնվեր ստեղծագործողը: Եվ այն ժամանակ նա կկանգներ արևմտահայ գրողների շարքում, որոնք առանձնակի տեղ են բռնում արևմտահայ գրականության մեջ, Ռոբերտյան, Սրմաքեշխանյան, Գրիգոր Չոիրապ և այլն: Սակայն ճակատագիրը Սարոյանին նետեց ամերիկյան գրականության մեջ: Եվ նա արտահայտվեց նույն այն ոգով, ինչ որ վերոհիշյալ գրողները, միայն այլ լեզվով, նյութով և տարածությամբ»<sup>3</sup>:

Ահա այսպես. թվում է՝ ամեն ինչ ասված է. թե՛ Դեմիրճյան գրող-գրականագետը, թե՛ Դեմիրճյան հայը իրենց վերլուծական միտքն ու ազգասիրական հույզը լիովին շռայլել են և Վիլյամ Սարոյանի համար: Բայց...

1 «Վերածնունդ» քաղաքական, հասարակական-գրական օրաթերթ, Թեհրան, 1946թ., թիվ 27:

2 «Վերածնունդ» քաղաքական, հասարակական-գրական օրաթերթ, Թեհրան, 1946թ., թիվ 28:

3 Նույն տեղում:



Անցնում է մի քանի տարի, և մարդկային, հասարակական-քաղաքական, միջազգային հարաբերությունների խառնադուլուկը ներխուժում է Դեմիրճյան-Սարոյան փոխհարաբերությունների տարածք: Անձնական ու գրական վերաբերմունքը բեկվում է այս երկու մեծերի արանքում, կյանքը բիրտ օրենքներ է թելադրում, ԽՍՀՄ-ԱՄՆ, սոցիալիզմ-կապիտալիզմ հակադրությունը պղտոր ջրեր է հոսեցնում երկու հայ գրողների, երկու հայրենասեր անհատականությունների հարաբերություններում:

Ինչևէ: Ավարտվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմը, Խորհրդային Միության հաղթանակը աշխարհին կամք թելադրելու հիմքեր էր տվել այդ երկրի վարչակազմին: Եվ ազդեցության գոտի ընդլայնելու միտումով ձեռնարկվում էին քայլեր, որոնք դուրս էին գալիս բուն ԽՍՀՄ սահմաններից: Այսպես, 1950թ. մարտի 19-ին Խաղաղության կոդմանկիցների համաշխարհային կոնգրեսի<sup>1</sup> մշտական կոմիտեի նստաշրջանը Ստոկհոլմում ընդունեց կոչ՝ ատոմային զենքն արգելելու մասին: Հունիսի 19-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը հռչակեց մի դիմում ի պաշտպանություն ստոկհոլմյան կոչի: Հանրապետություններում ստեղծվեցին Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեին օժանդակող հանձնաժողովներ՝ ստոկհոլմյան կոչի տակ ստորագրություններ հավաքելու համար: Հայաստանի հանձնաժողովի մեջ մտան Մ. Սարյանը (նախագահ), Ավ. Իսահակյանը, Վ. Համբարձումյանը, Ն. Չարյանը և ուրիշներ: Առ 30-ը հունիսի ՍՍՀՄ-ում ստորագրությունների թիվը հասավ 115514703-ի:

«Եվ ահա այն ժամանակ, երբ իմպերիալիստական Ամերիկան և Անգլիան, արագացնելով սպառազինությունների մրցավազքը, պատերազմ են նյութում, մեր բանվորները խաղաղության հերթափոխի են կանգնում: Այն ժամանակ, երբ իմպերիալիստներն իրենց կապիտալները դնում են պատերազմի գործի մեջ, մենք մեր միջոցները ծախսում ենք կոմունիզմի մեծ կառուցումների վրա: Մենք՝ սովետական մարդիկս, միահամուռ կերպով կստորագրենք հինգ մեծ տերությունների միջև Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ: Մենք կպահանջենք և ոչ թե կխնդրենք խաղաղություն:

1 Միջազգային զանգվածային շարժում ընդդեմ պատերազմի և սպառազինության: Միավորում էր խաղաղությունը պաշտպանելու պատրաստակամ մարդկանց՝ անկախ՝ նրանց ազգային, քաղաքական և կրոնական պատկանելությունից: Առաջացել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ միջազգային իրադրության խոր փոփոխությունների հետևանքով, երբ խաղաղության ուժերը սկսեցին ակտիվանալ՝ հենվելով համաշխարհային սոցիալիստական համակարգի երկրների, խաղաղասեր մյուս պետությունների, կոմունիստական և բանվորական կուսակցությունների, ազգային-ազատագրական շարժումների և բոլոր երկրների ժողովրդական զանգվածների աջակցության վրա:

Աշխարհի բոլոր ազատասեր մարդիկ մեզ հետ են: Ոչ մի ժողովուրդ չի կամենում կռվել, այլ ընդհակառակը, բոլոր աշխատավոր մարդիկ խաղաղություն են կամենում: Եվ ինչո՞ւ այս խաղաղասեր ժողովուրդների անվերջ բազմություններ պետք է իրար վրա հարձակվեն, իրար կոկորդ խեղդեն, իրար բզկտեն, թե ինչ է՝ Ուոլ-Ստրիտի<sup>1</sup> և Սիտիի<sup>2</sup> հոլփացած մոնոպոլիստները կամենում են ավելի հոլփանալ: Ո՛չ: Այդ չի լինի»<sup>3</sup>, - կարդում ենք Դեմիրճյանի «Մենք պահանջում ենք և ոչ թե խնդրում խաղաղություն» հոդվածում: Հոդվածը գրված է խաղաղության կողմնակիցների հայկական հանրապետական կոնֆերանսի կապակցությամբ, որը տեղի է ունեցել Երևանում, Հայֆիլիարմոնիայի ամառային դահլիճում, 1951թ. սեպտեմբերի 12-ին: Կոնֆերանսում ճառով հանդես է եկել նաև Դեմիրճյանը:

Մինչ այդ՝ հինգ մեծ տերությունների՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, ՉԺՀ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև խաղաղության պակտ կնքելու մասին դիմումը խաղաղության համաշխարհային խորհուրդը աշխարհի ժողովուրդներին էր հղել 1951թ. փետրվարի 21-26-ին, Բեռլինում կայացած իր առաջին նիստի որոշմամբ: Այդ դիմումի տակ միլիոնավոր մարդիկ դրել էին իրենց ստորագրությունները: Սակայն, ինչպես տեղեկանում ենք Դեմիրճյանի՝ 1953 թվին գրած հոդվածից, այդ միլիոնավորների թվում չէր Վիլյամ Սարոյանը: Եվ Դեմիրճյանը դարձավ այն գեները, որը պիտի իր սպանիչ կրակոցներն ուղղեր դեպի մեծ սրտի տեր «բարի հսկան» (ինչպես բնութագրել է Սարոյանին Վահագն Դավթյանը):

Ահա և գրվեց հակասարոյանական մի դաժան հոդված, որտեղ Դեմիրճյանը ոչ միայն ցավագին հարվածներ տեղաց Սարոյանի, այլև իր բարոյական սկզբունքների վրա: Հոդվածը՝ «Խոսք՝ ուղղված գրողին և Նրա ընթերցողին» վերնագրով, լույս տեսավ 1953թ. մայիսին «Սովետական Հայաստան» ամսագրում: Դեմիրճյանն իր խոսքն սկսել է ընդհանուր դիտարկումների ծիրում. «Ողջ մարդկությունը մտահոգված է այսօր մի շատ կենսական, շատ կարևոր խնդրով՝ ինչպե՞ս կանխել պատերազմի հրդեհը, ինչպե՞ս կղզիացնել և հանգցնել այն կրակները, որ վառվում են երկրագնդի վրա մի քանի տեղերում և սպառնում են հրդեհը տարածել ողջ աշխարհը: Կա հրդեհեղու ձգտումը և քանի գնում արագանում է այն,

1 Ուոլ Ստրիտ - Նյու Յորքի կենտրոնական փողոցներից մեկը, որտեղ տեղավորված են բանկերը և գործարար շրջանների գրասենյակները:

2 Սիտի - բառացի նշանակում է խոշորագույն հին քաղաք: Լոնդոնի կենտրոնական շրջանը, որտեղ գտնվում են բանկերը, արդյունաբերական, առևտրական և այլ տիպի հիմնարկները:

3 Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ, հ. 13, 1983, էջ 79-80:

ծավալվում: Պատերազմի վտանգը հեքիաթ չէ, այլ իրականություն: Ամեն մարդու պարտականությունն է՝ տեսնել այն և որոշել իր անելիքը: Իրոք՝ չի կարելի նստել մի նավ, որը կամենում են հրդեհել կամ խորտակել նույն նավի մեջ գտնվող ինչ-որ ճամփորդներ և անտարբեր դիտելով ասել՝ թող անեն ինչ կամենում են, իմ ի՞նչ գործն է»<sup>1</sup>:

Հիմնավորելու համար իր վրդովմունքի արդարացիությունն ու խաղաղասիրական հայացքների համամարդկային հնչողությունը՝ Դեմիրճյանը ծավալում է ընդգծված խորհրդային-ժողովրդավարական արծարծումների մի շարակցություն. «Երբեք մարդկությունը այնքան կարիք չի զգացել ազատության, մարդկայնության, երջանկության քարոզի և գործի, որքան ներկա օրերում, երբ աշխարհը կանգնած է արհավիրքի առաջ: Հազարավոր հասարակ մարդիկ, տնային տնտեսուհիներ, բանվորներ, գյուղացիներ, զինվորներ բարձրացնում են իրենց ձայնը ընդդեմ պատերազմի, հոգուտ խաղաղության: Եվ եթե չեն գտնում ոչ մի խոսք ասելու՝ լռելային ստորագրում են խաղաղության Կոչի տակ»<sup>2</sup>:

Մարդկության փրկչի առաքելությունն ստանձնած խորհրդային պետության ձեռնարկումին չարձագանքելու որևէ փորձ հարկ էր ներկայացնել իբրև հակամարդկային, հակաբորայական մեծամասշտաբ հանցագործություն, ինչ և անում է Դեմիրճյանը՝ խնդիրը բերել-տեղայնացնելով գրական ոլորտ. «Պատմական այս օրերին, երբ ամեն մարդու պարտականությունն է որոշել իր վարքագիծը, անցնել գործի՝ գալիք պատերազմի առաջն առնելու համար, որոշ գրողներ անցան պատերազմի հրծիգների կողմը, թողին խաղաղության գաղափարը, հանձնվեցին բուրժուազիային»<sup>3</sup>:

Բայց ամեն ինչ այնքան դրամատիկ չէր լինի, եթե Դեմիրճյանի հարձակումների թիրախում չհայտնվեր մի քանի տարի առաջ նրա իսկ գրչով այնքա՛ն սիրով ու ջերմությամբ մեծարված Վիլյամ Սարոյանը: «Եվ արդարև, ի՞նչ երկար պատճառաբանություն կարող է պատշաճ լինել մի գրողի համար, որն անցնում է իմպերիալիզմի կողմը, այն իմպերիալիզմի, որն ապրում է միմիայն արյան առևտրով, արյունահեղությամբ: Սինկլեռը<sup>4</sup>, Պրիստլին<sup>5</sup>, Օդեստը<sup>6</sup>, Սարոյանը, Ստեյնբեկը<sup>7</sup>, Ուստերմերը<sup>8</sup> և ուրիշ-

1 «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1953թ., մայիս, թիվ 5: (Հետագա քաղվածքները հոդվածից կլինեն այստեղից):

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

4 Լուիս Սինկլեր, ամերիկացի գրող /1885-1951/:

5 Ջոն Պրիստլի, անգլիացի գրող /1894-1984/:

6 Այս անձի մասին որևէ տեղեկություն չի գտնվել:

7 Ջոն Սթեյնբեկ, ամերիկացի գրող /1902-1968/:

8 Լուիս Ուստերմեր /1885-1977/, ամերիկացի բանաստեղծ, քննադատ:

ները բերին իրենց բացատրությունները, թե ինչո՞ւ անցան: Այո, «փիլիսոփայություններ»... Եվ դա է քստմտելին: Սակայն այս քստմտելի «փիլիսոփայությունների» մեջ ամենաքստմտելին Սարոյանի «փիլիսոփայություններն» են: Նախ և առաջ՝ Սարոյանին չի կարելի համարել պրոգրեսիվ կամ դեմոկրատ գործերից մեկը, որ անցել է իմպերիալիզմի կողմը: Նա «անցած» չէ. նա «այնտեղ» էր: Նա միայն մի երկու պատմվածքով ցույց է տվել, որ տեսնում է հայերի տրագիկական վիճակը Ամերիկայում և ամերիկյան ապրելակերպի «քաղցրությունները»: Այդ չի թեթևացնում նրա վարքագծի պատասխանատվությունը, այլ ծանրացնում է: Մասնավաճառորդ հայերի մասին գրած մնացած բոլոր պատմվածքներում և ասույթներում նա ունի խոսելու, դատելու մի եղանակ, որ չի կարող երբեք ներել նրան այդ ժողովուրդը, որի անունը կրում է նա իր ծննդական վկայաթղթի մեջ: Նա այդ ժողովրդի մարդկանց վրա ծիծաղում է որպես կոպիտ, բռի, բարբարոս մարդկանց վրա, որպեսզի զվարճացնել կարողանա իր տերերին՝ Ամերիկայի արիստոկրատիային, որը գնողն է նրա գրքերի և նրան ապրեցնողը: Նա այդպիսի դատապարտելի վերաբերմունք ունի դեպի շատ, շատ մարդիկ և կարող էր հարց ծագել, թե ինչպե՞ս է վերաբերվում դեպի այն ժողովուրդը, որ ծնել է և իրեն՝ Սրոյանին: Այստեղ մենք տեսնում ենք ամենաքստմտելի պատկերներից մեկը, որ երբևէ որևէ գրող, որևէ այլ ժողովրդի մեջ կարող է հանդես բերել: Սարոյանը մեկ ընդունում է հայ ժողովրդին, մեկ՝ մերժում»<sup>1</sup>, - ասիա ինքնաժխտումի մի ցավագին օրինակ, որը արձանագրել է Դերենիկ Դեմիրճյանը:

Բայց որպեսզի չենթադրվի, թե Դեմիրճյանը քաղաքական պատվեր է կատարում, հարկավոր էր հոդվածում զարգացնել գրական-գրական-նագիտական բովանդակության գործոնը: Եվ այսպես, Դեմիրճյանը ինքնահերքման դաժան պաթոսով ռմբահարում է 1946-ին այնպիսի՝ նուրբ դիտարկումներով վերլուծած սարոյանական գրականությունը. «Եվ, եթե կուզեք, մեր խնդիրը Սարոյանը չէ, ոչ էլ նրա քաղաքական դեմքը, ոչ էլ կասենք նրա՝ գրողի հանգամանքը: Մենք գործ ունենք ոչ Սարոյանի հետ, այլ այն մարդկանց հետ, որոնք նշանակություն են տալիս կամ տալու որոշ հակամտություն ունեն դեպի նա, ճիշտը՝ նրա «տաղանդը»: Եվ իրոք, Սարոյանի «արժեքը» նրա քաղաքական-հասարակական դեմքը չէ, նրա մասին խոսում են իբրև «տաղանդավոր» գրողի մասին: Նրա «տաղանդն» են թմբկահարում ամերիկյան բուրժուական լրագրերը, և ոմանք էլ բացասական վերաբերմունք ունենալով դեպի Սարոյանի քաղաքական վարքագիծը՝ վերապահ են նրա «տաղանդի» հարցում»<sup>2</sup>:

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

Դժվար չէ երևակայել, թե ինչ ներքին ընդվզում է ունեցել Դեմիրճյանը՝ գրելով այս հոդվածը, ինչ ամոթ ու ինքնակեղեքում է ապրել՝ ինքն իրեն այսպես ժխտելու, հակասելու համար: Եվ հասկանալի է, որ նա սպասել է իր ընդդիմախոսների հավանական կամիթներին՝ կապված նախորդ հոդվածում արտահայտած տեսակետների հետ: Այսօրինակ խոսակցությանները կանխելու միտումով էլ, թերևս, ինքն է «նախահարձակ» եղել՝ ի մասնավորի գրելով հետևյալ տողերը 1953-ի հոդվածում. «Ես 1945 թվականին մի համակրական հոդված գրեցի Սարոյանի մասին: Խոստովանում եմ իմ կոպիտ սխալը: Սարոյանը չէր և չէր կարող դառնալ պրոգրեսիվ գրող, չէր անցնի մարդասիրության, ժողովրդասիրության կողմը: Նրա խիղճը մեռած գտնվեց: Նա դեգերում է արվեստական, սարքովի բարոյագիտության բավիղներում: Նա որոնում էր ոչ վեհ, բարձր խոսքեր ու գործեր, այլ զվարճալի թեմաներ և հետաքրքրաշարժ ոճեր ու ձևեր... դրամ շահելու: Եվ գտավ այդ դրամը: Եվ տվին դրամ նրանք, ովքեր շահում և դիզում են արյան առևտրով, պատերազմի արհեստով: Գլորվեց խուլիք, գտավ պուտուկը... Դրամասեր գրողին չէր կարող բավարարել աշխատավոր, շահագործման դեմ, պատերազմի դեմ կռվող ժողովուրդը, իսկ ժողովրդի հոգեկան և բարոյական հարստությունը պետք չէին Սարոյանին: Նա իրոք ոչ մի կապ և ոչ մի գործ չունեց և չունի ժողովրդի հետ»<sup>1</sup>:

Եվ ամփոփիչ հատվածում Դեմիրճյանը ջախջախիչ հարված է հասցրել Սարոյանին՝ արդեն իբրև հակաժողովրդական երևույթ՝ այս բառի ամենալայն իմաստով. «Սարոյանը ո՛չ հայ ժողովրդի, ո՛չ էլ որևէ այլ ժողովրդի գրողն է: Նա Ուոլ-Ստրիտի մագնատների ծառան է և կամակատարը: Նա դեմ է անգամ այն ամերիկյան ժողովրդին, որի մեջ ապրում է»<sup>2</sup>:

Դեմիրճյանի իրարամերժ մեկնաբանությունները տարածվում են Սարոյանի երկերի բովանդակության վրա: Միևնույն գործի, միևնույն գեղարվեստական հատվածի մասին նա լիովին տարբեր գնահատական է տալիս իր գրած երկու հոդվածներում: Դիտարկենք այդ գնահատականները: Դրանք մասնավորապես ծավալվում են «Հայը և հայը», «Գյուղացին», «Գեղեցիկ, սպիտակ ձիուն ամառը», «Յոթանասուն հազար ասորի» պատմվածքների ծիրում: 1946 և 1953 թվականների հոդվածներում այդ երկերն արժանանում են միանգամայն հակասական արժեքուման: Այսպես, խոսելով «Գյուղացին» պատմվածքի մասին՝ Դեմիրճյանը հետևյալ միտքն է հայտնում. «Պատմվածքի մեջ նա խոսում էր մի «մարմնեղ

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

թանձրախիտ մազերով և մեծ ու սև պեխերով» հայի մասին, որ Ամերիկա էր եկել Հայաստանի հուլիսի գյուղից: «Արտակարգօրէն մեյամաղձոտ արտայայտութիւն մը ունէր»: Ընկնելով Ամերիկա, դառնում է կոշիկի գործարանի բանվոր: Թվում է, թէ այս մարդը Ամերիկա էր գնացել ապրուստ քաղելու և գտնելով այն՝ պետք է որ գոհ լինէր: Բայց հայրենակարոտը հանգիստ չի թողնում նրան: Մենակ է զգում իրեն: Երագում է իր հայրենի հուլիսը: Նուրբ հումորի տակ թաքնված ողբերգությունը արմատահան եղած գյուղացու, նրա առավել ևս ծանրացած դժբախտությունը՝ օտար հողի վրա չգտնելով իր հայրենի հողի կեանքը, - այս ամենը տրված է հագիվ նկատելի գույներով: Բայց խորը»<sup>1</sup>:

Ահա և Դեմիրճյանի բնութագիրը «Գեղեցիկ, սպիտակ ծիւռն ամառը» պատմվածքի վերաբերյալ. «Հեղինակը և իր ազգական տղան՝ Մուրատը, «որ զինք ճանչցող ամեն մարդէ՝ բացի ինձմէ՝ խենթուն կընկատուէր», իրենց ընտանիքի բարեկամ Ճօն Պերօ ասորու ագարակից ծածուկ դուրս բերած նժույզը երկար ժամանակ պահում են մի հարդանոցում և ձիարշավներ սարքում, զվարճանում: Իհարկէ մտադիր են վերջը յանձնել տիրոջը: Բայց տերը մեծ տագնապի մեջ է, որոնում է: Երկու երեխաների չարածճի վարմունքը իր հոգեբանական նրբությամբ տրված է: Հասկանալի է պատմվածքի աղը: Բայց պատմվածքի մեջ մի այլ գիծ կա, երկրորդաբար տրված, որ առավել գեղեցիկ է: Դա իր հոսքով հորեղբոր դեմքն է: «Հսկայական մարդ մը՝ որ թխահեր հզօր գլուխ և Սան Ճոտքին Հովտի ամենամեծ պեխը ուներ, խառնուածքով այնքան բուռն, այնքան դիւրագրգիռ, այնքան անհամբեր, որ որևէ մէկուն խօսքը կընդմիջէր գոռալով. «Վնաս չունի, ուշադրութիւն մի՛ ընծայէր ատոր»: Այսքան, ինչ ալ ըլլար խոսակցութեան նիւթը: Անգամ մը, իր սեփական զավակը, Արագ, ուր շենք վագած էր մինչև սափրիչին խանութը, ուր իր հայրը պեխը հարդարել տալու վրայ էր - ըսելու համար, թէ իրենց տունը կայրէր: Այս հոսքովը շտկվէր էր աթոռին վրա և գոռացէր «Վնաս չունի, ուշադրութիւն մի՛ ընծայէր ատոր»: Սափրիչն ըսէր էր. «Բայց տղան կըսէ թէ ձեր տունը կայրի»: Այն ատեն հոսքովը գոռացէր էր. «Բա և, վնաս չունի, կըսեմ»: Այս շատ ճշգրիտ գիծը մեր արևմտահայ հայրենակիցների մեջ զվարճալի և թերևս անեկդոտային հաճույք կարող էր պատճառել ընթերցողին, եթէ չկրէր իր մեջ մի այլ խոր ողբերգություն»<sup>2</sup>:

«Հայը և հայը» պատմվածքը այսպես է մեկնաբանվում Դեմիրճյանի գրչով. «Ռոստով մի զարեջրատան առջևով անցնելիս, Սարոյանը տեսնե-

1 «Վերածնունդ» քաղաքական, հասարակական-գրական օրաթերթ, Թեհրան, 1946թ., թիվ 27:

2 Նույն տեղում:

լով ներսը «Ճերմակ բաճկոնով սպասարկու մը, որ վստահաբար հայ էր» ներս է մտնում և մտերմաբար զրուցում հետը: «Չէք կրնար երևակայել, թե հայու մը համար ի՛նչքան մխիթարական է հայու մը հանդիպել աշխարհի մէկ հեռաւոր վայրին մէջ» - «Վա՛յ, ըսաւ ան: Վա՛յ (դանդաղօրէն, ակներև ուրախութեամբ), վա՛յ: Եւ հայերէն կիսօսիս: Չարմանալի է, որ չես մոռցած»: Հապա հայկական շարժումները, այնքան նշանակալից ծուկ բախելը և կոկորդալի խնդրը: Հայիոյանքը .... Արագ վերածնունդը ցեղին, անժամանակ և դարձեալ զորավոր, թէև տարիներ անցած է, թէև քաղաքներ քանդուած են, հայրեր ու եղբայրներ ու զաւակներ՝ սպանուած, վայրեր՝ մոռացուած. երազներ բռնաբարուած: Պիտի ուզէի տեսնել աշխարհի վրայ ուժ մը, որ քանդէր այս ցեղը... Օ՛հ, քանդեցէ՛ք այս ցեղը: Սեպտեմբեր դարձեալ 1915 է: Աշխարհի վրայ պատերազմ կա: Քանդեցէ՛ք Հայաստանը: Տեսէք կրնա՞ք: Չույզ մը հայեր կիսոսակցին աշխարհի վրայ, ո՛հ փորձեցէք քանդել զանոնք...»: Այսքան մեծ է Սարոյանի հավատը հայ ժողովրդի ներքին ուժի և տոկոսնութեան մասին»<sup>1</sup>:

«Յոթանասուն հազար ասորի» պատմվածքում Դեմիրճյանը իրավացիորեն և խորաթափանցորեն շեշտադրում է Սարոյանի մարդասիրությունը, որը դուրս է գալիս ազգասիրության նեղ սահմաններից և տարածվում բոլոր ազգերի, ընդհանուր մարդկության վրա. «Սեր ունիմ բոլոր ժողովուրդներու հանդէպ», - ասում է Սարոյանը «Եօթանասուն հազար ասորիներ» պատմվածքում սափրիչ երիտասարդ մի ասորիի հետ ունեցած զրոյցի առթիվ: Ասորիների աղետալի պատմության մասին խոսելիս ասում է՝ «Դուք զանոնք կգտնեք հոն, ուր ես գտա զանոնք, ու անոնք հոն պիտի ըլլան միշտ, մարդկային ցեղը, մասը մարդկութեան, նոյնքան Ասորեստանի, որքան Անգլիո մաս՝ զոր կարելի չէ քանդել, մաս՝ զոր ջուրը չի կըրնար քանդել, մաս՝ զոր երկրաշարժ և պատերազմ և սով և յիմարութիւն և ուրիշ որևէ բան չեն կըրնար քանդել»:»<sup>2</sup>, - գրում է Դեմիրճյանը և մեջբերված այս հատվածի առնչությամբ շեշտադրում Սարոյանի մարդու և ստեղծագործողի մարդասիրությունը, այլ ազգերի ցավն զգալու խորությունը, համամարդկային երազանքներին և տիպություններին հաղորդակից դառնալու հատկանիշները, բայց և չմոռանալով իր ազգայինը:

Բայց ահա հնչում է քաղաքական պատմերի կոչնակը, և Դերենիկ Դեմիրճյանը ստիպված է հակասել հենց ինքն իրեն, ոչ թե սոսկ դատափետել Սարոյանին: Վերևում մեջբերված հատվածներում հայտնված կարծիքները, ասել է թե՛ ինքն իրեն ժխտելով՝ Դեմիրճյանը գրում է. «Նա իրոք ոչ մի կապ և ոչ մի գործ չուներ և չունի ժողովրդի հետ: Իր ժողովուրդը

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

Նրան պետք եկավ միայն Նրա համար, որ Նրա «բրդոտ, բարբառոս, կոպիտ» կերպարանքը զվարճալի ձևերով ներկայացնի իր «բարձրաստիճան» ընթերցողներին: Այլապես Նրան ուրիշ ոչ մի բանի պետք չէր հայ ժողովուրդը: Ահա այս «հայ» գրողին է, որ դաշնակցականներն անվանում են «ամենն ցեղադրոշմ ու ցեղապաշտ» գրողը: Այդ ինչպե՞ս»<sup>1</sup>:

Հոգվածի հետագա շարադրանքում էլ հանդիպում ենք այսպիսի անհամոզիչ մեղադրանքի՝ ուղղված Սարոյանին. «Նա չունի ամեն մարդու մեջ վերապահված այն մարդկային թանկագին հատկությունը, որ ստիպում է մարդուն ուղիղ նայել աշխարհի իրերի վրա և տեսնել՝ սա քար է, սա տուն է, սա ռումբ է, սա դիակ է, սա արյուն է... Տեսնել և մի որևէ բան մտածել, որոշել գոնե եթե ոչ անելու, այլ գոնե ասելու: Սարոյանը նայում է շատ ուրիշ բաների, բայց չի տեսնում իրականությունը, որի վրա նայում է ոչ-մաքուր հայացքով: Այո, Սարոյանը ոչ մի տեսակ «ցեղադրոշմ ու ցեղապաշտ» գրող չէ, նա հայ չէ, և հայ լինելը պետք չէր. թող նա լիներ մի մարդ, ով հասկանում է մարդկային ամենատարրական բանը՝ կյանքը, խաղաղությունը, աշխատանքը, ստեղծագործությունը»<sup>2</sup>:

Մի՞թե կարելի է կասկածել Դեմիրճյանի գրականագիտական ունակությունների, գրականությունն զգալու հատկանիշների վրա և մտածել, թե հավատում է ինքն իր գրածին, երբ, վստահ ենք, խորությամբ կարդացել ու ընկալել է Սարոյանի գիրը, և Նրա սուր աչքից չի վրիպել հենց թեկուզ «Յոթնասուն հազար ասորի» պատմվածքի հետևյալ հուզիչ, մարդասիրությամբ լեցուն հատվածը. «Մի ժամանակ մենք մեծ ժողովուրդ ենք եղել,- շարունակեց նա /ասորին- Կ. Ռ./:- Բայց դա երեկ էր, երեկ չէ անցյալ օրը: Հիմա մենք պարզապես հին պատմություն ենք: Մեծ քաղաքակրթություն ենք ունեցել: Դրանով մինչև օրս էլ հիանում են: Բայց հիմա ես Ամերիկայում եմ ու վարսավիրություն եմ սովորում: Իբրև ցեղ մենք արդեն չկանք, մեզնից ոչինչ չի մնացել, մեր հաշիվը փակված է, ի՞նչ միտք ունի մեր լեզվով գրել-կարդալը: Մենք գրողներ չունենք, նորություններ չունենք, միայն այն, որ Անգլիան ժամանակ առ ժամանակ դրդում է արաբներին, որ մեզ կոտորեն: Սա է եղած-չեղածը: Բայց դա էլ նորություն չէ, դրան էլ ենք վաղուց ընտելացել: Այդ լուրերն էլ «Անտշիեթիդ Պրեսն» է հասցնում մեզ: Նրա խոսքերը ցավ պատճառեցին ինձ՝ հայիս: Սիրտս կսկծաց, ինչպես այն ժամանակ, երբ իմ ժողովուրդն էր կոտորվում: Առաջին անգամ էի ասորուց նման բան լսում, այն էլ անգլերենով: Ես համակրեցի այդ երիտասարդ տղային: Բանն այն է, որ ես սիրում եմ բոլոր մարդկանց, նույնիսկ Հայաստանի թշնամիներին, որոնց անունը,

1 Տե՛ս ծանոթագրություն 21:

2 Տե՛ս ծանոթագրություն 21:



ինչպես տեսնում եք, նրբանկատորեն չեմ տալիս: Թե ովքեր են դրանք՝ ամենքին է հայտնի: Առանձին-առանձին վերցրած՝ նրանցից և ոչ մեկի դեմ ես ոչինչ չունեմ, որովհետև նրանց մասին մտածում եմ իբրև ժամանակի այս մի հատվածում ապրող անհատների մասին և, որովհետև գիտեմ, հաստատ համոզված եմ՝ մարդը ընդունակ չէ գազանությունների, գազան է դառնում ամբոխը: Իմ թշնամանքը ամբոխին է ուղղված»<sup>1</sup>:

Եթե Սարոյանը կարող էր այսքան նուրբ ու խորաթափանց դիտարկումներ անել ասորիների ճակատագրի հարցում, մի՞թե պակաս զգայուն կգտնվեր հայ ազգին վերաբերող հարցերի դեպքում: Իհարկե, ոչ: Հավաստիացումը նրա բազում ստեղծագործություններն են ու ժամանակակիցների թողած վկայությունները:

#### **KARINE RAFAYELIAN - WILLIAM SAROYAN IN CONTROVERSIAL ASSESSMENTS OF DERENIK DEMIRCHYAN** - With this study we refer to two articles by DerenikDemirchyan, written in 1946 և 1953. In them, Demirchyan expresses contradictory opinions on William Saroyan's literature and civic description. The point is that Saroyan, being a great supporter of the Soviet Union, and of course, Soviet Armenia, for some reason did not sign the Peace Call adopted in 1950 on the initiative of a number of countries, including the Soviet Union, known as the Stockholm Call. We assume that Demirchyan wrote the 1953 article on the orders of the Soviet regime, in which he severely criticized Saroyan, considering him a faithful servant of the morals of the bourgeois world, to whom humanitarian, peaceful approaches are hostile. And this is in the case when in the article published in 1946 Demirchyan claimed the exact opposite and gave the highest assessment to Saroyan's works and the human image. We have raised these contradictory views in our article and presented a number of sources and views that shed light on the reasons for DerenikDemirchyan's contradictory approaches.

The first of Derenik Demirchyan's articles contains mainly literary observations on the stories of William Saroyan translated into Armenian. In the second part, Demirchyan is more obsessed with interpreting the political views of Saroyan and Western literary figures, and he only touched briefly on the literary description of Saroyan's works; therefore, it would be inaccurate to unequivocally accept this article as an assessment given to William Saroyan as a writer.

And, nevertheless, two written documents, where the summed up opinions are incompatible. In his article of 1946 Demirchyan qualifies Saroyan as an author with unique standards and approaches. He, particularly has written: "Saroyan, most of all

<sup>1</sup> Վիլյամ Սարոյան, Ընտիր երկեր, Երեք գրքով, Գիրք Ա, Երևան, Նաիրի, 2008, էջ 82:

hating the efforts of appearing original, is original, meditating and attractive naturally and inevitable. Saroyan is negligent to the circumstance of being a writer, to the literary art; he is honest in the demands of the writer's fame and glory."<sup>1</sup>

Demirchyan is not limited with the reflections of the individual-creative qualities of Saroyan as a writer, he is also consistent to clarify and show to the public the environment, the basis, from which that writer's inspiration is borne: "Saroyan is not a writer without environment, and he is subject to the influence of some school of life, as well as the stamp of his family life is very strong on his soul. And it is not without his Homeland, as it seems to him. The ghosts of his Old Homeland follow him in his new Homeland and for such profoundly feeling soul, as is Saroyan; those ghosts will still, perhaps, follow him for a long time until the end. Neither his refusal from his old Homeland and nor his denial of that Homeland is of no importance. The old Homeland and its people make Saroyan to speak that are connected with thousands of invisible threads with his soul."<sup>2</sup>

Let us note that Saroyan visited Armenia four times - in 1935, 1960, 1976 and 1978. During the last two visits his permanent companion has been Vahagn Davtyan, they communicated like confidants, and by the impression of those days in the future Vahagn Davtyan has written about Saroyan and published the book 'The Kind Giant.' In the book the author says that Saroyan was a man of deep mind, a person of analytical great capacities, a very developed man and adds the following lines: "But all that surprisingly 'does not appear' in his works. While creating, he as if 'forgets' all that and again resembles to the popular wandering goossans/Armenian national singers and story-tellers, who only with natural motivation and gift have woven wonderful eposes and legends that with the ambition of surprising the reader, demonstratively spread all their secrets and knowledge on the surface of their works, whereas the greats in a way absorb all that in the artistic pictures and characters, depth and essence that it becomes 'unnoticeable...'"<sup>3</sup>

As we see, Demirchyan and Davtyan, describing Saroyan's literature and the human kind, show the same approaches.

But in the second article Demirchyan contradicts himself.

He particularly has written: "We cannot consider Saroyan one of the progressive or democratic writers, who has passed to the side of the imperialism. He is not 'passed:' he was 'there.' He has only shown with two stories that he sees the Armenians' tragic situation in America and 'the sweetnesses' of the American way of life. That does not facilitate the responsibility of that behavior, but makes the matters worse. Particularly, in all remaining stories and sayings written about Armenians he has a way of speaking, considering that can never forgive him that people, whose name he bears in his birth certificate."<sup>4</sup>

Demirchyan has been a meticulously coordinating his archive, a man preserving

any valuable material in its decent place. He has not preserved, nevertheless, one of our mentioned two articles, in his archive. Why? Is it a chance, a carelessness, a fact of not giving importance...? You can think whatever you want. But there is one but, in the folds of thousands of archive samples he has preserved and handed over to the history a small piece of the signed paper, where the following record is made: "We have opportunity for neither precisely presenting William Saroyan's literary portrait nor his identity. We have at hand only a collection of Stories translated by SahakBalegtchian, which only gives impressions. In fact, Saroyan is an American writer, Armenian by origin. And if."<sup>5</sup>

The circumstance that none of the originals of two voluminous articles or the journal version relating to Saroyan has been preserved in Demirchyan's archive, already contains certain information: we are intended to think that Demirchyan wanted to bypass the fact of referring to Saroyan, in the folds of the time hide-lose the records of his contradictory assessments addressed to Saroyan. And is it by chance that unlike these two articles, he has preserved the above-mentioned autographed paper? And the fact that William Saroyan's literature is an exceptional example of Armenians' loving, humanity and peace-loving, is beyond all kinds of doubts.

We are sure that Demirchyan and Saroyan were the bearers of equal values of the same creative belief and the pain and joy of their Homeland. It's enough only to re-read Demirchyan's "The Armenian" and Saroyan's "The Armenian and The Armenian" essays in order to be convinced in it. These great individuals could not be mentally irreconcilable with each other: simply the times were like that that they appeared in different sides of the conflict dictated by geopolitical riots

**Key words:** *Demirchyan, Saroyan, incompatibility, literature, politics, peace, war, unpublished, manuscript, archive*

**КАРИНЕ РАФАЕЛЯН - УИЛЬЯМ САРОЯН В ПРОТИВОРЕЧИВЫХ ОЦЕНКАХ ДЕРЕНИКА ДЕМИРЧЯНА** - В данной статье обсуждаются две публикации Дереника Демирчяна, которые были написаны в 1946 и 1953 годах. В них Демирчян выразил противоречивые мнения о литературе и гражданской позиции Уильяма Сарояна. Суть в том, что Сароян, будучи большим поклонником Советского Союза и, в частности, Советской Армении, по каким-то причинам не поставил свою подпись под Призывом к миру, который был важным документом в 1950 году и в составлении которого главную роль сыграл СССР. Предполагаем, что в 1953 году по поручению советского руководства Демирчян написал статью против Сарояна, где резко критиковал его, назвав человеком преданно служившим интересам

буржуазии. И это в том случае, когда в 1946 году он опубликовал статью, где охарактеризовал Сарояна совсем иначе. Тогда он назвал Сарояна очень талантливым писателем, а его литературу – очень трогательной и человечной. Вот эти противоречивые взгляды обсуждаются в нашей статье, в то же время представляются разные источники, которые объясняют противоречивость оценок Демирчяна по отношению к Сарояну.

В первой статье Дереника Демирчяна в основном выражаются литературоведческие замечания в отношении рассказов Уильяма Сарояна, которые были переведены на армянский язык. Во второй статье Демирчян главным образом увлечен размышлениями о политических взглядах Сарояна и писателей Запада и только мимолетно отзывается о литературных достоинствах произведений Сарояна. Следовательно, не будет верным однозначно воспринимать эту статью как оценку, данную писателю Уильяму Сарояну.

И тем не менее, есть два письменных документа, содержащиеся мнения в которых являются противоречивыми.

В статье 1946 года Демирчян характеризует Сарояна как автора со своими особенными критериями и подходами. Он, в частности, писал: “Сароян больше всего ненавидя попытки быть самобытным самобытен, мудр, привлекателен естественно и неизбежно. Сароян небрежен к своему писательству, к своему литературному творчеству, он скромнен в своих требованиях к известности и славе писателя”<sup>1</sup>.

Демирчян не ограничивается ссылкой на личностные и творческие качества Сарояна как писателя, он стремится выяснить и показать публике ту среду, ту основу, из которой рождается вдохновение писателя. “Сароян не является писателем вне среды, он испытал воздействие определенной школы жизни, а также сильно запечатлелись в его душе воспоминания детства. И он не человек без Родины, как ему кажется. Призраки Старой Родины преследуют его на его новой Родине, и Сарояна как человека с такой глубокой душой еще долго, быть может до конца, будут преследовать эти призраки. Ни его отречение от своей старой Родины, ни отрицание этой Родины не имеют никакого значения. Собеседником Сарояна является его старая Родина, ее народ, которые связаны с его душой тысяча и одной невидимой нитью”<sup>2</sup>.

Следует отметить, что Сароян четырежды посещал Армению, в 1935, 1960, 1976, 1978 годах. Во время последних двух визитов Ваагн Давтян был его постоянным спутником, они общались как близкие друзья, и позднее под впечатлением тех дней Ваагн Давтян написал и издал книгу “Добрый великан” о Сарояне. В книге автор говорит, что Сароян обладал глубокомыслием, большими аналитическими способностями, был очень развитой личностью и добавляет

следующие строки. «Но все это удивительным образом «не проглядывается» в его произведениях. Сочиняя, он как бы “забывает” все это, он опять уподобляется тем бродячим народным гусанам и сказителям, которые только по природному инстинкту и дарованию соткали чудесные сказания и легенды. Это, так называемое, “забвение” — прерогатива великих людей, незначительные же, стремясь удивить читателя, демонстративно расстилают все свои тайны и знания на поверхности своих произведений, а великие так растворяют их в художественных образах и характерах, в словах и сути, что становятся “невидимыми”<sup>3</sup>.

Как видим, Демирчян и Давтян, описывая произведения Сарояна и род человеческий, проявляют одинаковые подходы. Но во второй статье Демирчян противоречит самому себе.

Он, в частности, писал: “Сарояна нельзя считать одним из прогрессивных или демократичных писателей, который перешел на сторону империализма. Он не “перешедший”, он был “там”. Он только своими двумя рассказами показал, что видит трагическое положение армян в Америке и “сладости” американского образа жизни. Это не облегчает ответственность за свое поведение, а усугубляет ее. Тем более, что во всех других рассказах и высказываниях, написанных об армянах, у него имеется манера говорить, судить о том, что его никогда не может простить народ, имя которого он носит в свидетельстве о рождении”<sup>4</sup>.

Демирчян был человеком, который аккуратно систематизировал свой архив и хранил любой ценный материал на своем месте. Однако ни одну из двух упомянутых нами статей он не сохранил в своем архиве. Почему? Случайность, халатность, факт непридачи им важности?.. Что тут скажешь, можно обдумать. Но есть одно “но” - среди тысячи архивных материалов он сохранил и передал истории клочок бумаги со следующей собственноручной надписью о Сарояне: “Нет возможности точно представить ни литературный портрет Уильяма Сарояна, ни его личность. У нас под рукой только небольшой сборник “Рассказы” в переводе Саака Палегджяна, который производит только впечатления. По сути Сароян — американский писатель, армянин по происхождению. И если»<sup>5</sup>.

Тот факт, что в архиве Демирчяна не сохранились ни оригинал, ни журнальная версия двух объемистых статей о Сарояне, уже содержит определенную информацию - мы склонны думать, что Демирчян хотел обойти факт обращения к Сарояну, спрятать-потерять в складках времени зафиксированные им противоречивые оценки Сарояна. И случайно ли, что, в отличие от этих двух статей, он сохранил вышеуказанный листок с собственноручной надписью. И то, что литература Уильяма Сарояна является исключительным образцом армянства, гуманизма и миролюбия, не вызывает сомнений.

Мы уверены, что Демирчян и Сароян были равноправными носителями

одного творческого вероисповедания, боли и радости своей Родины. Достаточно перечитать эссе Демирчяна “Армянин” и Сарояна “Армянин и армянин”, чтобы убедиться в этом. Эти великие личности не могли быть духовно непримиримыми друг с другом, просто времена были такие, что они оказались по разные стороны противодействия, продиктованного геополитическими конфликтами.

**Ключевые слова:** Демирчян, Сароян, противоречивость, литература, политика, мир, война, неизданный, подлинник, архив.

### Օգտագործած գրականություն

1. Rebirth political, public-literary daily, Tehran, 1946, Ns 25, 27, 28
  2. In the same place
  3. Vahagn Davtyan, The Kind Giant/Meetings with William Saroyan/, Yerevan, Sovetakan Grogh/Soviet Writer publishing house, 1979
  4. Sovetakan Hayastan/Soviet Armenia journal, Yerevan, 1953, May, N 5
- The autograph is preserved in Demirchyan Fund of Literature and Art Museum/ LAM DF 816, the duplicate is in Derenik Demirchyan House Museum.

Օգտագործված գրականության ցանկ

1. Վահագն Դավթյան, Բարի հսկան /հանդիպումներ Վիլյամ Սարոյանի հետ/, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1979
2. Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու 14 հատորով, Երևան, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ. 13, 1983
3. Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու 14 հատորով, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 14, 1987
4. «Իրատես» պարբերական, Երևան, 27.06.2019, հղումը՝ <http://www.irates.am/>

DOI: 10.54503/1829-0116-2022.1-113